

ՀԱԼԴՐԾ ՍՈՆՉԻՆԻ

(ԺԵՐԱՅԱԺ ԶԻՆՈՒԹՈՒ)

ՄԻ ՊԱՏԻՆԵՐ ԿԵԱՆՔԻՑ ԱՌԱՋ

Թարգմանեց Գրանտերէնից

ՅՈՎՀԱՆՆԵԼՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՐՏՐԱԿԱՐ ՑՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ 7

1909

84

Σ-15

Հ-48872
Armenia

19 NOV 2010

ՀԱԼԴՐՈ ՍՈՆՉԻՆԻ

84

Հ-15 (ԺԵՐԱՅԱԺ ԶԻՆՈՒԹՈՒ)

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԿԵՎԵՔԻՑ ԱԲ ԱԾ

Թարգմանեց Գրանսերէնից

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՅՈՎՃԱՆՆԻՍԵՆԻ

ԽԿ. № 22920

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԷԼԵՔՏՐԱԿԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՑԻ ՊՈԼԻՏ 7.
1909

000-0005.2013
29.05.2

6295

ԾԵՐԱՑԱԾ ԶԻՆՈՒՈՐ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԿԵԱՆՔԻՑ ԱՌԱԾ

ՆՈՒԻՐ ՓՈՔՐ ԱԲԳԱՐԻԿԻՆ

ՄԵԾ ԱԲԳԱՐԻ ԹՈՌԱՆ

Թարգմանչից



90778-67

Հալդրո Սօնչիսին 75 տարեկան մի պատուելի ծերունի էր։ Դեռ երիտասարդ ժամանակը նա զինուոր էր Կարլոս Ալբէրտի և Վիկտոր Էմմանուէլի մօտ։ Նավարրայի մօտ նա վիրաւորել էր ձեռքը, Սալերինոի մօտ՝ ոտը։ Պատերազմի դաշտում և հիւանդանոցներում շատ հիւանդութիւններ ու զրկանքներ էր կրել, իսկ վերջին պատերազմում, երբ որ կամենում էր ազատել մեռած ընկերոջը, հրացանի գնդակներից նա կորցնում է իւր ձեռքը։ Փոքը և կամուտով կերակրում էր իւր պառաւ կնոջը և երեք որբեկ թոռներին՝ չնայելով որ համարեա կոյր էր, բայց և այնպէս ուրախութեան ժպիտը միշտ երեսին էր և լսելով գանգատները նորնատիր զինուորներից՝ նոցա դարձած ասում էր։

— Ամօթ է ձեղ. թէև դժուար է զինուորի կեանքը, բայց նորանից արժանաւոր և պատուելի մարդ չ'կայ։
Երեք որդի ունէր և երեքն էլ մեռել էին

պատերազմում։ Մեռածներին շատերը միտ չեն բերում։ բայց նա մտաբերելով իր որդոց, պարձենում էր նորանցով և միշտ ասում էր իւր խեղճ որք թոռներին թէ՛ երբ որ մեծանաք, դուք էլ զինուոր պիտի լինիք և եթէ ձեր բաղդը կրացւի ինչպէս իմը, կ'կարողանաք կատարել ձեր պարտքը և առանց որևէ անձնական օգտի։

Նա շատ աղքատ էր. առաջ անուագործ էր. բայց թուլութիւնը մինչեւ այն աստիճան էր հասել, որ էլ չէր կարողանում բանել. դժուար էր նորան կերակրել այն որբիկներին, բայց Բէդալլօ էլ տալ չէր կամենում։ Կենում էր մի նեղ փողոցում մի տան վերեկի յարկում. կինը անդամալոյծ էր և անկողնից դուրս չէր գալիս. բայց էլի՞ն նա միշտ ուրախ էր։

— Եհ, ես քաջ զինուոր էի, ասում էր նա պարծենալով երիտասարդներին. ինքը գիտէր թէ ոչ միայն քաջ, այլ և ազնիւ մարդ էր և այդ զգացմունքն էր որ լցնում էր նորա սիրտը ուրախութիւնով, թէպէտ և մարմինը ամենեին թուլացել էր։ Նա երջանիկ էր, ծիծաղում և խաղում էր երեխայոց հետ, բանի էր գնում երբ որ ուղարկում էին, շօշափում էր իւր մեդալները, կասցենոցի ծառերի տակ հանգստանում. էր և սպասում էր թէ երբ կանցնի այն գեներալը, որը հեռուից նորան կ'ճանաչէ և ինքն առանց տիտուրաների ազատ կասի նորան Լամարմօրս, ինչպէս

նորան կոչում է ամբողջ քաղաքը (աշխարհը)։ Ծերունի Հալդրօն ճեմելու ժամանակ հետն էր առնում թոռներից մէկին և շունը։

Այս շունը նոյնպէս պառաւել էր. սորան դեռ երբ փոքր էր, առել էր Մարմէնտի դաշտից մի սպանած զինուորականի կողքից. շան անունը Տամբուրինօ էր (բարանապիկ)։ ոչ գեղեցիկ էր ոչ էլ լաւ ցեղից, ծերութիւնից գոյնը փոխել էր, պոչ բոլորովին չունէր. երեխայը նորան սիրում էին, հիւանդից չէր հեռանում և Հալդրօի սիրածն էր։ Բաւական է, նայել Տամբուրինօի վերայ և ասել, թէ նա էլ Re Gulan տոմո է, պարծենալով պատմում էր շան մասին, ինչպէս որ ցոյց էր տալիս իւր մեդալները. Պատմում էր թէ ինչպէս այս շունը ճանապարհորդում էր իւր հետ Լօմբարդեայի տաք դաշտերումը և ինչպէս մի անգամ դա վիրաւորուած էր։

Առհասարակ նոքա ամենքը երջանիկ էին թէ ինքը Հալդրօն, թէ թոռները, և թէ շունը, թէպէտ և ճեմելուց յետոյ պէտք է բարձրանային 120 աստիճան սանդուղքով և սոված առանց ընթրիքի պէտքէ պառկէին քնելու։

Երկու տարի շարունակ Հալդրօին տուդանքի էին ենթարկել, որ շան համար հարկ չէր տալիս. բայց մի ազնիւ կին, որ նորան լաւ ճանաչում էր վճարում էր այդ նշանակած տուդանքը. բայց

ինքը ամենեին չէր կարող հասկանալ թէ շուն պահելը ինչ մեղք է:

Դեռ նա ինչպէս կուռւմ էր Աւատրիացոց հետ ատամներով և թաթերով, ասում էր զարմացած ծերունին:

Նորան բացատրեցին, թէ դա միևնոյն բանն է որ նա պատերազմել է. և խեղճ ծերունին շան հետ ծառի տակ նստած չէր կարող հասկանալ թէ շունը ինչ մնաս պէտք է բերած լինի:

Տամբուրինօն հանգիստ նայում էր անցկենողների վերայ և բերանը բաց արած առողջ օդ էր ծծում. քաջ գեներալը նոցա մօսից անց կենալու ժամանակ շատ սիրով բարեւում էր նսրան և Տամբուրինօի հետ. Հալդրօն գեներալին տեսնելուց յետոյ ամբողջ շաբաթ իրան երջանիկ էր համարում. «նա ինձ չէ մոռանում» մտածում էր Հալդրօն և շատ ուրախ էր որ գեներալը չէ մոռացել, ինկ հայրենիքը մոռացել է:

Հալդրօն ոչ գրել ոչ կարդալ գիտէր. բայց նա տգէտ չէր և ոչ զինուորական մեքենայ, այլ մի քաջ մարդ ազատութեան համար պատերազմող. Կարլոս Ալբէրտի ժամանակ նա այնպիսի ջերմ սիրով վառուած էր դէպի իւր հայրենիքը և նորա անկախութիւնը, որ նորա մաքովն անգամ չէր անցնում որևէ ցած և եսական զգացմունք. Նա լաւ էր ըմբռնում երգի ողին, երբ պատերազմում ամառուան լուսնեակ

գիշերով կամ հասարակութիւնով լի թատրօնում բարձր երգում էր «Fuori il stranier». կարելի է ապստամբութեան առաջնորդներն ունեին որևէ եսական նպատակներ, բայց Հալդրօն պարզամիտ և բաց սրտով մի զինուոր էր. ի բոլոր սրտէ նա ատում էր օտարազգիներին և չխնայելով իւր կեանքը, նա ազնիւ ծառայում էր հայրենեաց ազատութեան գործին:

Ապստամբութեան առաջնորդները կենում էին շքեղ տներում և շուայլ կեանք էին վարում ամեն օր. բայց խեղճ զինուորը դժուաբութեամբ էր կարողանում հաց գտնել իւր որբիկների համար, բայց նա ամենեին չէր տրտընչում.

Ինձանից խելօքները, ասում էր, շատ օգուտ քաղեցին պատերազմից, ոչխարին ազատեցին և կրտեցին, իսկ ես միայն պիտանի էի կռուի համար, ասում էր, բայց հազիւ թէ զգում էր որ ազատութեան տաճարը շինելու համար նա ինքը իւր ուսի վերայ բարձած շատ քարեր էր բերել, միշտ ուրախ էր և երջանիկ կլինէր եթէ մշտական մի գործ կարողանար գտնել իւր համար, բայց գործ գտնելը դժուար է մանաւանդ աղքատների համար. Մի անգամ պատմում էր, թէ երիտասարդ ժամանակ ինքը դարբին էր. դա իմ և իմ հօր արհեստն էր. մենք կենում էինք այն ժամանակ Սէտիմ ճանապարհի վերայ. դեռ

այնտեղ ծառերը չէին կտրել. ձիեր էինք նալում, միտս է գալիս ես դեռ փոքրիկ երեխայ էի, երբ ֆրանսիացիք ձիերը նալելու բերելիս հօրս հետ թագ էինք կենում բարդի ծառերի և թփերի մէջ։ Ես անգործ չէի լինի եթէ շարունակէի իմ արհեստը, Բայց ես գնացի պատերազմելու, իմ դրութիւնը ինձ շատ յիմար էր երեսում, այսինքն հանգիստ ձեռքերս ծալած նստել, երբ օտարազգիք և բռնակաները տանջում էին հայրենիքս. լաւ արի թէ ոչ դժուար է ասել. բայց եթէ մնայի և շարունակէի իմ արուեստը, կարելի է կ'հարստանայի, հին շապիքը բաց անելով ցոյց տուեց իւր կրծքի վէրքերից մէկը գնդակից, իսկ միւսը թրից ստացած և այսպէս պարծենալով կարելի է նա իրան համարում էր առաւել երջանիկ քան թէ մնար և լինէր Սետիմում հարուստ դարբին, ունենար իւր տանը ձին, լաւ գումար և ամեն տօն օրին խորոված փոքրիկ գառ։

Բայց նա այժմ միս չէր ուտում, կենում էր մի կեղաստ տան վերևի յարկում։ Առաւօտը գետը սիրուն փայլում էր արեգակի ճառագայթներից և արել մայր մտնելու ժամանակ աւազը և ափը ներկում էր ոսկեզրծ գոյներով. սակայն այս սիրուն պատկերները հալդրօին իւր փոքր պատուհանից՝ որ ամբողջովին կորել էր հաստ և խռնաւ պատի մէջ անկարելի էր տես-

նել։ Գարնանը նորա տունը ջուրը լցնում էր թողնելով աւազ և խռնաւութիւն։ Ահա ինչ պարզեներ էր տալիս Արնո գետը խեղճ ծերացած հալդրօին. իւր շապիկը լուանալիս կամ իւր թոռների լողանալը տաք ամառային գիշերները Արնոյի մէջ տեսնելիս նրա սրտի մէջ բորբոքւում էր հայրենի սէրը՝ այն հայրենիքի, որից նա ոչինչ չէր ստացել։

Երբ որ այն գեներալը, որին ճանաչում էր բոլոր աշխարհը, մի օր վախճանուեց; Հալդրօ Սօնչինին ահազին ամբոխի առաջն ընկած տանում էր թաղելու իւր ընկերին։ Նա լաւ զգում էր թէ ումն է կորցնում, Հալդրօն էլ չպէտք է տեսնէր այլևս նորա քաղցր ժամանակ և օտարներին ցոյց տալով էլ չպէտք է ասէր Eceo dencrele— eceolo! Երկու ամիս անցած տեսնում է որ իւր գեներալի ձին լծած աղբ է տանում. և ինչնիրան տրտնջանալով ասում էր. «արձան են ուզում կանգնեցնել թող հարիւր արձան էլ կանգնեցնեն. բայց ինչպէս թոյլ են տալիս որ նորա ձին լծած աղբ տանի. սաստիկ վրդովուած հոգին դուրս էր գալիս և իհարկէ չէր հանկանում թէ տէրութիւնը և ազնուականները միայն ուշք են դարձնում արտաքին փառասիրութեան։

Գեներալի մահուանից յետոյ նա իրան բոլորակի միայնակ էր զգում. մանաւանդ երբ Արնո գետը լցւում էր նորա տունը և մի կտոր

հաց չէր լինում թոռներին կերակրելու, նա էլ չէր իմանում ումնից սպասի օգնութիւն։ իսկ է նա գեներալից ոչինչ չէր խնդրում, բայց նեղ տեղը ընկած նա կարող էր նորանից խնդրել և մի անգամ նորան գեներալը 70 տարեկան ծերունուն դարձած ասաց շամլիո տօ» և էլ ծիծաղելով ուրախացան, որ երկուսն էլ հաւասար զինուորականներ են. բայց այդ գգուանքը և սէրը կորաւ և կորաւ յաւիտեան։ Գեներալի ձին լծած աղք էր կըում, և ծերունի զինուորը գգում էր իրան միայնակ. բայց նա թոռներ ունէր, որոնք միշտ Տամբուրինօի հետ խաղում էին. իսկ ինքը Տամբուրինօն մեծ պարտաւորութիւններ ունէր. երեխայոց պաշտպանում էր ընած ժամանակ ճանճեր սպանելով, պահում էր, շորերը, երբ որ կախէին անում գետի ափին, մկներ էր բռնում որոնք լիքն էին Արնօի աշխում և միանգամ թաթով խփելով նա ցատկացնում էր և շպրտում այն կողմը, լաւ իմանալով որ մկները լաւ կերակուր չեն նորա համար, թէպէտ և շատ սոված լինէր, բայց նորա համար էր բռնում, որ նոքան հիւանդ տանտիկնոջ և երեխայոց անհանգիստ էին անում։

—Նանցա սպանում է իրեւ քրիստոնեայ, ասում էր Հալդրօն ուրախանալով։ Առողջ և բարի Տամբուրինօն միայն մկներ չէր սիրում։ Ամբողջ Պինեօնում նորան սիրում էին և նա եր-

ջանիկ էր Արնօի ափում հանգիստ պառկած նայել նաւակների, ձկնորսների և լուացքանողների վերայ։ Նոր կարգ ու կանոնները, որոնց համար այնքան աշխատել էր Հալդրօն, միշտ խեղճ են և նոյնպէս ժողովրդին անհանգիստ էին անում, տուգանք էին նշանակում աթոնը փողոցը դուրս տանելու կամ շան համար։ Ինքը Հալդրօն շատ ազնիւ մարդ էր և ոչ ոքի մնաս չէր բերում։ Եթէ փող ունէր, մի կտոր հաց էր առնում իւր համար, իսկ եթէ չունէր մի կերպ կառավարում էր։ Իսկ ընդհակառակն նորան միշտ անում էին, թէ օրէնքի դէմ է գնում, չէ հնագանդում, ուղարկում էին ահաւոր տպած յայտարարութիւններ ժողովրդին, որ կարդալ անգամ չէր կարողանում։

—Եթէ մարդ կատարում է իւր պարտաւորութիւնը, ոչ ոքի մնաս չի բերում, ինչու նորան հալածում են. զարմացած հարցնում էր նա ինքը։

—Եթէ մեզ ուզում են տանջել առանց մի պատճառի, լաւ է մի մեղք գործիր, աւելացնում էր նորա դրացին։

—Է՛ս, միթէ անհանգիստ չեն անի, ասում էր միւս դրացին, անցեալ տարի մի խեղճ մարդու սպանեցին ծեծելով առանց պատճառի, իսկ աւագակները ազատ են և ոչ մի պատիժ չ'ստա-

ցան։ Իսկ տարին հարիւր անգամ գալիս է սահմանադրի նշանակած փողը առնելու։

Հալդրօն շատ համբերող, հանդարտ մարդ էր, ինչպէս զինուորներից շատերը բայց այդ կարգերը նեղացնում էին նորան. իսկ նոցա դէմ նա չէր կամենում ապստամբել։ Նորա թոռներից ամենագեղեցիկը վախճանուեց բգացաւից (դիֆերիտ) բայց նոցա տան մօտ դեռ թոյլ էին տուել հաւաքել զանազան կեղտոտութիւններ։ Տան առաջ փոքր այգում նա յասմիկ (յասմիկ) էր տնկել, յասմիկն արդէն բարձրացել էր ծաղկելով պատի վերայ։ Հալդրօն շատ սիրում էր ծաղկեներ, փունջեր էր շինում և ծախում, բայց նորան հրամայեցին ծառը կտրել, որովհետև օրէնքը թոյլ չէր տալիս պատերը զարդարել ծառերով բայց նա չէր հնազանդուել, ուստի դորա համար տուգանք նշանակեցին և ծառը կտրեցին։ Մի անգամ մարդ սուտ ցոյց էր տուել, որ Հալդրօն նորան պարտ է 20 ֆրանկ. Հալդրօն չէր հասկացել ինչ որ գրած էր յայտարարութեան մէջ թէ նրան կանչում են դատարան և ամբողջ Պինեօնում։

—Ես ոչ ոքի ոչինչ պարտ չեմ, բոլոր սըրբերը գիտեն, բայց որովհետև դատաստան չեն գալի և վճռեցին Հալդրօից առնել 20 ֆրանկ տուգանք և 9 ֆրանկ՝ որ չէր եկել դատարան։ Նա ոչինչ չունէր վճարելու և դատարանի պաշ-

տօնեան անիրաւաբար ծախել տուեց նորա ամաները և անկողինը, որի վերայ պարկած էր խեղճ հիւանդ կինը։

—Դա արդարութիւն է, գանգատվում էր վրդոված ծերունին.

—Օրէնքով է արած, պատասխանեց պաշտօնեան։

—Ֆլորենցիացիք շատ համբերող մարդիկ են։

—Եթէ պարտք լինէի, ես այնքան չէի վըրդովուի, պատմում էր գրացիներին, որոնք չնայելով իւրեանց աղքատութեանը, անկողին տուեցին նորա հիւանդ կնոջը։

—Այս բարութեանց համար էիք դուք պատերազմում, Հալդրօին նկատեց դրացիներից մէկը, բայց ծերունի զինուորը շարժեց գլուխը և բերանից հանեց չիրուխը, որ սովորութիւն ունէր ատամերով բռնել (թէպէտ վաղուց է որ փող չունի թութուն առնելու)։

—Ամեն բան լաւ կլինէր, եթէ հանրապետութիւն ունենայինք, ասաց գրացին։

—Ոչ, ոչ պատասխանեց Հալդրօն կրկին գլուխը շարժելով, այն ժամանակ ամեն մի սոված փոր հասարակութեան հացը կուտէր։ Դա առաւել վատ կլինէր։

—Լաւ է... որ կառավարութիւնը լաւ կլինէր ասաց վրդովուած միւսը բանւորը։

Մերունի զինուորը իսկապէս չգիտէր. նրա

համար դժուար էր այդ ինդիրը լուծելու, որի վերայ կարելի է ինքը կավուրը շատ կ'մտածէր:

Բոլոր Պինեօնի ժաղովուրդը և այլ տեղերում այն եզրակացութեան էին հասել, որ ճշշմարտասէր լինելը աւելորդ է նոյնպէս և մեղադոր թէ անմեղ, օրէնքը պատժում էր հաւասարապէս:

Ամառ էր, տարուայ այդ ժամանակը Հալդրօի համար վատ միջոց էր, որովհետեւ օտարազգիք հեռանում էին Ֆլորենցիայից, նա երկու անգլուհի ծանօթ տիկիններ ունէր, որոնք նորանըանի ուղարկելիս բաւական լաւ էին վճարում: բայց խաղողի ծառերը երբ սկսում էին ծաղկել, այդ տիկինները գնում էին և ամբողջ ամառ Հալդրօն անգործ պէտք է արևի տակ պառկած մնար, չնայելով որ պէտք է կերակրէր երեխայոց և Տամբուրինօին: լինում էր որ ձուկն էր բռնում կամ բանի էին ուղարկում, մի կերպ՝ գլուխը պահում էր, բայց շատ դժուար էր նորան և առած հացի կտորը տալիս էր իւր հաւատարիմ շանը:

Մի երեկոյ գործ չունէր և թոռների և Տամբուրինօի հետ գնաց ման գալու, սաստիկ տաք էր. ամպերը մռայլու հաւաքուած էին քաղաքի և գետի վերայ, շրջակայ սարերը պատած էին ծխի նման ամպով, հարուստները քաղաքից հեռանում էին ամարանոցներ և անտա-

ներ, ամարային անուշահոտ լեռնային օդը ծծելու. իսկ քաղաքում թէպէտասում էին թէ մարդ չի մնացել, բայց փողոցներով ծոյլ քայլերով տիսուր այս և այն կողմն էին գնում:

Հալդրօի թոռները և նորա հաւատարիմ շունը ուրախ էին և ծերունի զինուորը հանգիստ նայում էր աշխարհի վերայ որից բացի անհաւականալի յայտարարութիւններից ոչ գործ, ոչ հաց էր ստանում:

Գնացին դէպի նոր ճանապարհը, որ տգեղացրել է մի ժամանակ գեղեցիկ Սան-մինիատօի կանաչած լեռան զառիվայրը. բայց գեղեցիկ տեսարանների վերայ Հալդրօն ուշ չէր դարձնում և աթոռի վերայ պառկած կուլ էր տալիս երեկոյեան առողջ լեռնային օդը. երեխայքը խաղում էին շան հետ հեռուից լսելով հիանալի վայսի հնչիւնը, որ գալիս էր մօտակայ հիւրանոցից:

Նոցա մօտից անցնող ջուր ծախողը, որ լաւ ծանօթն էր Հալդրօի երեխայոց, ջուր տուեց և դա Հալդրօին առաւել դուր եկաւ, քան թէ իրեն առաջարկէին մի բաժակ գինի:

Ահա բարի մարդիկ աշխարհումս միշտ կը գտնուեն, կըգտնուեն ասում էր իւր մտքում:

Արեգակը մայր էր մտնում լեռների մէջ ներկելով նոցա կարմիր գոյներով: Երկնքում ակսում էին փայլել աստղերը. մոխրագոյն և տօթ եղանակը փոխուեց և արդէն ժամանակ էր

տուն վերադառնալու։ Երեխայքը յոգնած ննջում
էին Հալդրօն բռնեց նոցա ձեռից և սկսեցին ցած
գալ լեռներից, իսկ Տամբուրինօն հետեւում էր
նոցա։ Համսնելով Հռովմայեցոց դրան մօտ, նոքա
լսում էին հեռուից շան հաշիւնը և բարձր ձայներ։

— Կատաղած շուն! Կատաղած շուն։ Մի շուն,

շրջակայ գիւղերից, երեխ սովից, որովհետև սո-
վորութիւն ունեն ամբողջ օրը տաք արեխ տակ
կապած պահել առանց հաց և ջրի, ազատուել
էր կապից և փախել քաղաք։ Անցկենողներից
մէկը հանաքով խփել էր ոտով, խեղճ կենդանին
նորան կծել էր, թուլութիւնից վէր էր ընկել
փողոցի մէջ և ամենեին ահ չ'կար նորանից և
ոչ ոքի վնաս չէր կարող բերել եթէ նորան
անհանգիստ չանէին, բայց (փոխարէն) շանը հան-
գիստ թողնելու և օգնելու տեղ աղաղակ էին
բարձրացնում թէ նա կատաղած է և երկաթի
ձանկերով պոկում էին նորա միսը. ոստիկան-
ները հանգիստ նայում էին. այդ տեսարանից
կենդանին չէր իմանում ինչ տանջանաց է ար-
ժանացել, իսկ վերքերից հոսում էր արիւնը և
փողոցի երեխայքը ուրախ էին և ծափահարում
էին, բայց այն մարդը, որի վարտիկը պատռել է,
գոռզոում էր խելագարածի պէս։

— Son morto! Son morto!

Հալդրօն երեսը գարձեց այդ տղեղ տե-
սարանից և շտապելով գնում էր, որ երեխայքը

արիւնը չտեսնեն։ Շունը, Տամբուրիտօն ականջ-
ները ցած ձգած և բոլոր մարմնով դողալով ա-
հով նայում էր իւր կիսամեռ ընկերոջ վերայ։
Յանկարծ մէկը ոստիկաններից ձգեց նորա պա-
րանոցի վերայ թոկը և այնպէս սեղմեց որ, լե-
զուն բերանից դուրս եկաւ։

— Թողէք իմ շունը! Ասաց Հալդրոն. — Նա
ձեզ ոչինչ չի արել նա կատաղած է։ Իսկ ոս-
տիկանը առաւել սեղմեց կապը և Տամբուրինօն
չէր կարողանում ոչ շնչել, ոչ շարժւել։

— Զեր շունը այստեղ էր, երբ որ կատաղած
շունը անցաւ, կարելի է դորան կծել է, ասաց
պէտք է տանել քննելու։

— Ի՞նչ քննութիւն, հարցըրեց զարմացած
Հալդրոն, նա ի՞նչ է արել. թողէք նորան խընդ-
րեմ, թողէք. նորան կխեղղէք։ Զէք տեսնում որ
աչքերը դուրս են ուզում գալ!

— Լուր թէ չէ քեզ էլ կբանտարկեմ, ասաց
ոստիկանը և քարշելով թոկը ձգեց շունը մէջքի
վերայ. նոյն ըոսէ շտապում էր շան ուրիշ ծա-
ռայող, որին տէրութիւնը նշանակում էր ամառ-
այ ժամանակ. ոստիկանը կանչեց նորան և
յանձնեց շունը։

— Զգէք սայլի վերայ և տարէք, ասաց նա
ուշ չդարձնելով Հալդրօի վերայ։

Խեղճ ծերունին երեխայոց ձեռքից բռնած
այնպէս անօդնական էր ինչպէս իւր շունը. Աղա-



Հում էր արտասուքը երեսին երեխայոց հետ
չոքած. բայց բոլորը իզուր էր. ոստիկանը կա-
տարեց իւր ասածը և ժողովուրդը պահեց օրէն-
քի կողմը, որովհետև օգուտ էր իր ապահովու-
թեան: Քաջ Հալդրոն, որ վստահ գնում էր թըշ-
նամիների թնդանօթների դէմ, վախկոտի պէս
գողում էր. բայց իբրև հին զինւորական լաւ
համարեց հնագանդել. կիսամեռ և յուսահատւած
նա ընդդիմադրութիւն անզամ ցոյց չտւեց:

Զարմացած հարցնում էր, թէ դա ինչ
կնշանակի, բայց ոչ ոք ամբոխից նորան հա-
մակրութիւն ցոյց չտւեց, իսկ վիրաւորած շու-
նը պատրաստ էր շունչը տալու և պաշտօնեան
շտապով կարողացաւ նորան համարեա թէ կի-
սամեռ ձգել սայլի վերայ:

—Այդ նոր քաղաքական կանոններ են, ա-
սաց ծիծաղելով նոցա մօտից անց կացող ան-
գղիացին—այդ կանոնները այն բարութիւններից
մէկն են, որոնց համար դուք արիւն էիք թա-
փում:

Իսկ Հալդրոն ոչինչ չհասկացաւ:

—Իմ շունս ոչ ոքի մնաս չի բերել, լսում
էր խեղճ Տամբուրինօի ձայնը:

—Դուք կարող էք նորան տանել **40** օրից
յետոյ, եթէ չվճարեք ինչ որ հարկն է. սառն
պատասխանեց ոստիկանը:

Պաշտօնեան հեռացաւ սայլով. Հալդրոն մնաց

միայնակ փողոցում. երեխայըը կուչ եկած կազում
էին նորա ծնկներին: Յետոյ երեխայոց ձեռքից
բռնած վազեց սայլի յետեկից:

—Սպասէք, սպասէք խնդրեմ, աղաչում էր
—ես ծերացած զինւոր եմ. ես պատերազմում
էի մեր հայրենիքի համար. ինչու էք ինձանից
տանում իմ Տամբուրինօին. յետ տւէք ինձ նո-
րան: բայց ոստիկանը միայն ծիծաղում էր և
հեռանում սայլով:

—Իզուր էք գնում և խնդրում, ասաց մի
ակնոր աղքատ, որ անց էր կենում նորա մօտով.
Ճեզ չեն վերադարձնի շունչը. լաւ է առաւօտը
գնացէք սպանդարան, կարելի է դեռ չեն սպանի:

—Սպանել նորան, ասաց զարմացած Հալ-
դրոն:

Նոյն րոպէին նորա սիրտը այնպէս խփեց,
ինչպէս որ նորան ասացին կուստոյցի մօտ թէ
«մենք յաղթուած ենք» և շուարած չէր իմա-
նում թէ ինչ մնի:

—Զէ, առաւօտը կստանաք, ասաց աղքատը
կամենալով մխիթարել ծերացած զինւորին. մի
բարկացնէք դոցա, նոքա գլուխը կշարդեն:

—Բայց այն բարի տիկինը հարկ է տալիս
իմ տեղ:

—Դա միենոյն է. ամենքը հարկ են տալի.
բայց մի բանի համար հարկ տուողներին ստի-
պում են և ուրիշ բաների համար էլ հարկ տալ.

լաւ է որ ինձանից ոչինչ չունեն առնելու։ Հալդրօն ոչինչ չէր լսում և շարունակում էր վասգել սայլի յետելից, բայց տեսնելով որ բոլոր իւր խնդիրքը իզուր է, սկսեց հայհոյել ոստիկանին այսպիսի բառերով, որ միայն կարող են սովորել երկար տարիներով կազարմում կենալով (զինւորների հետ կենալով)։ բայց սայլը և ոստիկանը շուտով հեռացան, թողնելով Հալդրօին առաւել վատ հայհոյանք. խեղճ ծերունին չէր կարողանում նոցա համնել և վերջապէս կանգնեց. երեխայքը յոզնած լաց էին լինում: Ինչ պէտքէ անէր խեղճը. թէպէտ և մութն ընկել էր, բայց այնպիսի տօթ էր, ինչպէս ցերեկը. նա միայն կարող էր վերադառնալ հիւանդ կնոջ մօտ, որովհետեւ Հալդրօն ուշացել էր և նա կարող էր անհանգիստ լինել:

Նա կարող էր միայն այնքան արագ քայլերով գնալ, ինչքան որ թոյլ էր տալիս նորան ծերութիւնը և երեխայոց փոքր ոտերը. երբ որ հասաւ իւր տանը և բարձրացաւ վերին յարկի իւր սենեակը, հիւանդը սկսեց գանգատւել իւր ցաւերի և նորա ուշանալու մասին. նա աշխատում էր ուրախ երեսով պատասխանել, բայց սրտում համարեա թէ լաց էր լինում: Երեխայոց շորերը հանեց և փոքրին պարկացրեց գորգի վերայ, որը նոցա համար անկողնի տեղ էր ծառայում. մեծը նոցանից, որ սովոր էր. միշտ Տամբու-

ըինօի հետ քնել՝ չէր կարողանում աչքերը կպցնել առանց իւր ընկերի և արտասուքը երեսին հարցնում էր թէ ուր է շունը:

—Շունը ուր է, հարցրեց հիւանդը, վեր կենալով անկողնից:

—Ես ճանապարհին նորան կորցրի և պէտք է գնամ պտոեմ, պատասխանեց հանգիստ Հալդրոն:

—Շուն է կորցրել: Մի վախիր նա քեզանից լաւ գիտէ քաղաքը, շուտով տուն կդայ:

Հալդրօն ոչինչ չպատասխանեց:

—Ես կարծում եմ, որ լաւ կլինի ինքս գնամ պտոելու, ասաց մի քանի րոպէից և տւեցնորան մի կտոր հաց և ամանով ջուր:

Իսկ ինքը տնից դուրս եկաւ և գնաց դէպ այն կողմը, ուր քաղաքի սպանդանոցն էր. երբ որ հասաւ դուներին, արդէն վակ էին և նա ոչինչ չկարողացաւ անել, բայց վերադառնալ չէր կամենում և ման էր գալիս փողոցում պահապանի պէս: Նորա բաղտից մէկը ծանօթ դրացիներից մօտով անց էր կենում.

—Դուք իզուր էք այստեղ սպասում, ասաց դրացին, իմանալով նորա նպատակը. դուք մինչև առաւօտ ձեր շունը չէք ստանայ. լաւ է տուն գնացէք և փող գտէք, որովհետեւ առանց փողի չեն տալ ձեզ Տամբուրինօին: Հալդրօն սկսեց մտածել. որտեղից կարող էր փող գտնել.

նորան ծանօթ աիկինները գնացել էին Ֆլորենցիայից. գեներալը մեռել էր. նա ոչինչ չունէր ծախելու. որովհետև ոստիկանը բոլոր տան բաները տարել էր. եթէ ողորմութիւն խնդրէր, նորան կրանտարկէին: Զէր իմանում ինչ անի, նա ուրախութեամբ կծախէր իւր մեղալները, որ կարողանար ազատել Տամբուրինօին. բայց այդ էլ արգելած էր օրէնքով. ամբողջ գիշեր տխուր մտածմանց մէջ ման էր գալիս փողոցում, չվստահանալով տուն գնալ և վաղ առաւօտը նա արդէն սպանդանոցի մօտ էր, որտեղից լսում էր շների հաշիւնը և ի հարկէ իւր սիրած Տամբուրինօինը. բայց միայն ժամի հինգն էր և նորան ասացին որ գայ տասին:

— Զի՞ կարելի տեսնեմ իմ շունը, խնդրում էր Հալդրօն, բայց նորան կոպիտ պատասխանում էին թէ առանց մեծի հրամանի չի կարելի:

Նա վերադարձաւ տուն և ասաց կնոջը, որ դեռ չկարողացաւ գտնել շունը. դեռ չէր կարողանում ասել նորան և երեխայոց ձգմարիտը. բայց հիւանդը և երեխայքը արդէն լաց էին լինում, նոքա կամենում էին տեսնել շանը, բայց շունը մրտեղ էր. ամբողջ գիշեր միները նոցա անհանդիսա էին անում. իսկ Տամբուրինօն կորել էր. Խեղճ Հալդրօն պատրաստեց ինչ որ սլէտը էր տանը. տաքացրեց հիւանդի համար քիչ սուրճ և խնդրեց դրացիներից մէ-

կին, որ վերահասու լինի նոցա, երբ որ ինքը տանը չի լինի. դրացիները տներից գուրս էին եկել և խօսում էին Տամբուրինօի վերայ. երեխայքը լաց էին լինում, իսկ մեծերը անիծում էին տէրութիւնը: Այս քաղաքական կանոնները, որոնք ձնշում էին ժողովրդին, առաւել ցածացնում էին իշխանութեան նշանակութիւնը ամբոխի առաջքան թէ խիստ օրէնքները, որոնց հետեւմ էին աւելի մեծ յանցանքներ. փոքր քաղաքական կանոնադրութիւնները այնքան վաս չեն բերում հարուստներին, որովհետև նոքա կարող են վճարել, բայց աղքատների համար մեծ տանջանք են. եթէ այժմեան օրէնք գրողները խելացի եւ հմուտ լինէին (իմաստուն), նոքա կարճացնէին չնչին օրէնքների թիւը, որ ամեն քայլում նեղացնում են ժողովրդին:

Արդէն ժամի տասն էր. Հալդրօն կրկին եկաւ սպանդանոց, ուր շարքով կանգնած էին եղներ, գառներ մորթելու աղան քաղաքացւոց համար. նորան պատասխանեցին թէ մի ժամ էլ պէտք է սպասել. զլխաւորը շատ զբաղւած էր. պէտք է սպասէր յոգնած, անքուն և սոված, գարշելի արիւնի հոտը մորթած անասուններից տարածւած էր օդում. քանի անգամ մարդպատժելիս շարժ չէր գալիս, բայց այժմ տեսնելով խեղճ անասնուններին քիչ էր մնացել որ սիրաը գնայ:

Վերջապէս նորան տարան գլխաւորի մօտ, ոք մի անտաշ, կոպիտ մարդ էր il Mastino անուն ժողովրդից ստացած:

—Դուք ի՞նչ էք կամենում, հարցրեց խիստ երեսով. Հալդրօն դողալով պատմեց եղած անցքը:

—Թոյլ տուէք ինձ առնել իմ շունը, աւելացրեց, երբ որ վերջանում էր պատմածը՝ ահա ձեզ այն թուղթը, շան համար հարկը մի տարով առաջ է մի բարի կին վճարել: Մեծը մի հայեցք ձգեց թղթի վերայ:

—Դա ամենեին կապ չունի գործի հետ, ասաց նա կոպտութեամբ. 40 օր պէտք է այստեղ մնայ փորձելու համար. դուք առաջ վճարէք 20 ֆրանկ նորան կերակրելու համար և յետոյ 15 ֆրանկ, որ շունը առանց բերնակալի փողոց էք դուրս թողել:

—Ես կաշխատեմ փող գտնել. բայց եթէ կարելի է, թողէք մի նորան տեսնեմ:

—Դուք կարող էք տեսնել երբ կբերէք փողը, բայց նորան 40 օրից առաջ առնել չի կարելի:

—Ի՞նչ է արել շունը:

—Մի յանդգնէք, խիստ գոռաց պաշտօնեան. ես քո գլուխդ կկոտրեմ, թշուառ. դուք կիմանաք, որ ես այստեղ մեծն եմ:

Ահա այդպէս են խօսում իտալիայսւմ հարկ

տուողների հետ պաշտօնեաները, որ իսկապէս նոցա ծառաները պէտք է լինէին:

—Եթէ կարելի է մի տեսնեմ նորան, ինդրեց Հալդրօն:

Պաշտօնեան կանչեց ծառայողներից մէկին և արհամարհանօք ասաց.

—Դուքս հանէք այս խելագարին:

Փոքը ծառայողը նորանից բարի գտնուեց, որովհետև կոպտութիւնը և խստութիւնը իտալացւոց ծառայողների մէջ այնքան աւելի է, որքան մեծ պաշտօն ունի ծառայողը. Նա մօտեցաւ ծեր գինուորին, բռնեց ձեռից և միւս կողմը տանելով մեղմ ձայնով ասաց.

—Գնացէք, լաւ է փող բերէք. առանց փողի դուք ոչինչ չէք անի. մի բարկացնէք նորան, թէ չէ կհրամայի սպանել ձեր շանը:

—Բայց թոյլ տուէք գոնեա նայեմ, ինդրում էր Հալդրօն արտասուքը երեսին:

—Լաւ. ես ձեզ ցոյց կտամ շունը. բայց կարելի է ձեզ համար պաշտօնիցս զրկուեմ եթէ մեծը իմանայ. այս դռնով դուրս եկէք և ինձ սպասէք:

Հալդրօն հնագանդեց և սկսեց սպասել. բայց նորան թւաց թէ դարեր՝ անցան մինչև նորա գալը:

—Նա գնաց այժմ, ասաց կամաց, ես ձեզ

կտանեմ շան մօտ. խեղճ կենդանուն այստեղ տանջում են:

Հալդրօն գնաց նորա յետից երկար կօրիգորով և մտաւ մի փոքր նեղ ու ցած յարկով սենեակ, ուր ոչինչ չէր երկում բացի մի քանի պսպղուն աչքերից. մի սրտաշարժ ձայն լսեց և այդ ձայնը ծամբուրինօի ծանր հաչոցն էր:

Շուտով նա կարողացաւ մութ սենեա. կում գանազանել չորս մեծ շուն, երկուսը նոցաւ նից մեծ պատից կապած շղթաներով, որ հազիւ կարողանում էին շարժւել և այնպէս նեղ էին կապած, որ շունչ հանել անդամ դժւարանում էին:

Ահա մենք այսպէս ենք պահպանում կատաղած ջներին, նկատեց հալդրօնին առաջնորդը ծիծաղելով:

Հալդրօն նորան չէր լսում. չոքել էր ծամբուրինօի առաջ, որը աղաչում էր նորան այստեղից ազատել:

—Միտ բերել անդամ, որ ծամբուրինօն պատերազմել էր Աւատրիացւոց հետ, ասաց հալդրօն լաց լինելով:

Վերջապէս առաջնորդողը բռնեց ուսերից և ուժով դուրս հանեց:

—Գնանք այստեղից թէ չէ կկորչենք և ես, և դու և քո շունը. եթէ մեղ այստեղ ու Մատոն տեսնի, ինձ պաշտօնից կզրկեն, իսկ քո

շանը կամ կդեղեն կամ կսպանեն. դէհ, դէհ գնանք:

—Մի փոքր սպասիր, իմ սիրելիս, իմ ընկերս, իմ Տամբուրինօս, ասում էր Հալդրօն և շունը հնազանդելով իւր տիրոջ ձայնին, իբրև թէ հասկացել էր նորա խօսքերը, կամաց սկսել էր ոռնալ իւր ընկերների հետ: Երբ որ այստեղից հալդրօն դուքս եկաւ, նա չէր մտաքերում թէ որտեղ էր: Նա գնում էր իբրև երազում և իւր մէջ խօսում էր.

—Մտածել անդամ, որ նա պատերազմել է Աւատրիացոց հետ:

—Գնացէք և փող գտէք, ականջին ասաց ծառայողը. կարելի է կթողնեն, չեն սպանի:

—Բայց այդ նեղուացքում ինչպէս նոքա կենան. ի՞նչպէս տանեն շղթան:

—Մենք այդպէս ենք բժշկում կատաղած ջներին, ասում էր պաշտօնեան:

—Բայց նա կատաղած չէ:

—Այսպէս նա կկատաղի. բաւական է որ մի քանի օր կենայ շղթայով և մթնում, իսկ յետոյ նորան կսպանեն և կտան բժշկին նայելու:

—Սատանէք — նոցա անուանեց հալդրօն և այդ շունը պատերազմում էր Մալֆերինօի և Մարժենտի մօտ, վիրաւորւած էր Կուզզոյցի

մօտ, Աւստրիացոց հետ պատերազմում էր ատամներով և թաթերով:

—Մենք բաւական հերոսներ ունենք, ծաղըլով ասում էր սպանդանոցի ծառան, մեզ այժմ փող է հարկաւոր, գնացէք փող բերելու, կարելի է կտան, ովք է իմանում:

Հալդրօն վերադարձաւ տուն. նորա բոլոր մարմինը գողում էր, գլուխը ցած էր ձգել և այդ րոպէին նա համարեա թէ մի քանի տարով ծերացել էր. անցեալ օրից նա ոչինչ չէր կերել, նորա յասմիկի ծառը կտրել էին և կոնջ անկողինը խլել էին այն տէրութեան օրէնք՝ ներով, որի համար նա թափել էր իւր արիւնը:

Ժողովեց դրացիներին Արնօ գետի ափում, ուր Տամբուրինօն պահպանում էր կախ արած լուացքը. նորա մօտ ժողովեցան ի հարկէ աղքատները. սրանցից մէկը աւագ. էր կրում, որը ձկնորս էր, որը լուացք անող կին. կային և երեխաներ կեղտոտ և թողոտ շորերով. Հալդրօն արտասուքը երեսին պատմեց իւր հետ պատահած տխուր անցքը:

—Եւ նա պատերազմել է Աւստրիացոց հետ, կրկնում էր Հալդրօն ցրուած սպիտակ մազերով և գոյնը թռած երեսով—նա մինչև այժմ Աւստրիացոց գնդակների տեղը ունի, Սալֆերինօն մօտ նա փոքր էր, բայց ամենեին չվախեցաւ. նա քաջ, ճշմարտասէր և հաւատարիմ էր

շատերից. նա պատերազմում էր Աւստրիացոց հետ, իսկ այժմ կապած է շղթայով. դա անիրաւութիւն է, անիրաւութիւն! Մի քանի օրից յետոյ կկատաղի և նրան կսպանեն. փողերը եւ որտեղից գտնեմ. ուրախութեամբ կծախէի իմ մեղալները, բայց ինձ դորա համար կբանտարկեն, ի՞նչ անեմ. ի՞նչ անեմ:

—Առէք ինչ որ ունենք, գոռաց միաձայն հաւաքւած ամբոխը, գուք քաջ զինուոր էիք. այն գուք մեղաւոր չէք. մեր տէրութեան օրէնքը անիրաւ է. ահա ձեզ ազատութիւն՝ որի համար գուք կուռում էիք, բայց գուք մեղաւոր չէք:

Նոյն րոպէին նոքա դատարկեցին գրպանները. ամենքն էլ աղքատներ էին. նոցանից որը զամբիւղներ էր գործում, որը ձկնորս էր, որը ողորմութեամբ էր ապրում, բայց ոչ ոք չինայեց իւր մի քանի կոպէկները. մէկը տալիս էր արծաթ, որը ոսկի, որը փաթաթած թուղթ 50 սանտիմով. մի փոքր երեխայ հրեշտակի նման, ինչպէս նկարում էին Դէլ. Սարտօի պատկերների վրայ, գնաց վազեց իւր տուն և բերեց մի սանտիմ, որ նորան տուել էին կեռաս առնելու.

—Առէք Տօ-տօի համար, աղաղակում էր, առէք իմ սանտիմն էլ. Հալդրօն երեսը ձեռներով ծածկեց. Փողերը համարեցին, միայն 15 ֆրանկ էր. փող տուղները 40 հոգի էին և նոքա պէտք

է զրկուէին ամբողջ շաբաթ թութունից և գինուց. ոչ ուտեմ, ոչ քնեմ մինչև չբերեմ մնացեալ գու-
ամենքը զարմացած մնացին նայելով հաւաքւած մարը. բայց իսէր Աստծոյ, թողէք ինձ հետ այդ
փողերին, որտեղ աչքի էր ընկնում երեխայի խեղճ անմեղ կենդանուն:
Մյու մեծը, որին կոչում էին il Mastino փայլուն սանտիմը:

— Կարելի է սորանով էլ կհամաձայնեն, բարկացաւ և բարձր գոռաց:
կտան, ասում էր Հալդրօն յոյսով:

— Ի հարկէ, եթէ կը խոստանաք մնացեալը ասա, կհրամայեմ սպանել քո շունը. և նա հրա-
վճարել. ամենքը գիտեն, որ դուք ազնիւ մարդ մայեց դուրս տանել ծերունի Հալդրօին:
Էրկար ժամանակ նա կանգնած էր սպան-
էք, աւելացրեց ալեոր ձկնորսը:

Հալդրօն շունչ քաշեց, բայց յոյս չունէր դանոցի առաջ. փողերը մնացել էր ձեռքում.
որ լաւ վերջանայ:

— Կփորձեմ, ասում էր արտասուքով: Աս. Ժամից յետոյ, փողոցով անցաւ մի օտարուհի
տուած ձեզ օրհնի ձեր բարութեան համար: և ծերունի զինւոր Հալդրօն նըան շատ ահաւոր
Եւ ճանապարհ ընկաւ, չկամենալով ոչ ու երեաց. օտարուհին կանգնեց, բռնեց ձեռից և
տել, ոչ խմել:

— Յետ բերէք Տօտօին, խնդրում էր գեղեցիկ երեխան՝ որ տւել էր մի սանտիմ:

Հալդրօն նորան մօտեցաւ, բարձրացրեց և համբուրեց:

Հասաւ սպանդանոց և խնդրեց, որ իրան ընդունի այն ահարկու մեծը, որ չարչարում է կենդանիներին, il Mastino անունով երբ ընդունեց, առաջարկեց նորան 15 ֆրանկը ասելով:

— Իմ դրացիք ինձ օգնեցին, բայց աւելի հաւաքել չկարողացայ:

Զէք առնի այս գումարը և չէք տայ իւ շունը. ես պէտք է աշխատեմ զիշեր ու ցերեկ

Այն մեծը, որին կոչում էին il Mastino փայլուն սանտիմը:

— Կորիը այստեղից, աղքատ: Մի խօսք էլ

վճարել. ամենքը գիտեն, որ դուք ազնիւ մայեց դուրս տանել ծերունի Հալդրօին:

Երկար ժամանակ նա կանգնած էր սպան-

երեսից երեսում էր յուսահատութիւն. մի կէս

տուած ձեզ օրհնի ձեր բարութեան համար: և ծերունի զինւոր Հալդրօն նըան շատ ահաւոր

Եւ ճանապարհ ընկաւ, չկամենալով ոչ ու երեաց. օտարուհին կանգնեց, բռնեց ձեռից և
տել, ոչ խմել:

Նա ծանր շունչ քաշեց և զարմանալի կեր-

պով նայեց վրան. օտարուհին կը կնեց հարցը. այժմ Հալդրօն հասկացաւ նորա ցանկութիւնը և

պատմեց ինչոր եղել էր. օտարուհին լսում էր և գրպանից և տւեց 30 ֆրանկ:

— Ձեր շունը այժմ կազատեն, ասաց նա,
կը կին գնացէք նոցա մօտ և տուէք փողերը:

Առաջ Հալդրօն չէր հաւատում օտարու-
հու աստծին, բայց յետոյ բարձր աղաղակեց.

— Բերէք այն շունը, հրամայեց բռնակալը.

Ծառայողները լուռ կանգնած էին. ծերացած զինուորը ծանր շնչում էր, կարծես նրան խփել էին կացնով, բայց չէին կարողացել մորթել. վերջապէս բերեցին ոչ Տամբուրինօին այլ միայն նորա դիակը. աչքերը դուրս էին եկել, բոլոր դունչը փրփրակալել էր, մարմինը ուռել. Նա էլ չէր կարող ափումը նստել երեխայոց հետ և խաղալու ժամանակ նոցա պահպանել:

Հալդրոն կռացաւ, նայեց վերջին անգամ իւր ընկերոջ վերայ և համբուրեց ինչպէս մեռած երեխայի. յետոյ ուղղուեց և մի անգամ խփելով վէր ձգեց բռնակալին՝ որովհետեւ նա մեռցը էր իւր սիրելի ընկերոջ, որը իր պէս քաջ պատերազմումէր հայրենիաց ազատութեան համար:

Յետոյ նա բարձր ծիծաղեց:

— Տարուրինօն ինձ հետ միասին քաջ պատերազմում էր Աւստրիացոց դէմ. Մենք արիւն էինք թափում հայրենիաց ազատութեան համար:

Այս խօսքերը ասելուց յետոյ, վեր ընկաւ և մեռաւ իւր Տաբուրինօի մօտ:

Բժիշկները ասացին՝ որ Հալդրոն մեռել էր կաթուածից (սարդ). բայց Պիլեօնի ժողովուրդը լաւ գիտէր, թէ ինչ էր պատճառը: Մեռած շան մարմինը ձգեցին աղպի մէջ, իսկ Հալդրոն մարմինը թաղեցին աղքատների գերեզմանատանը: Խեղճ հիւանդ

— Դա Աստուածածինն է, երեացել է ինձ օգնելու:

Եւ նա կփաթաթուէր նորա շորերին, եթէ նա արագ քայլերով չհեռանար. Հալդրօն բարձրացրեց գլուխը, ուղղուեց և գնաց սպանդանոցի դրան մօտ. արդէն կէս օր էր:

— Ես բոլոր փողերը բերել եմ, ասաց նա բարձր, կնշանակէ շունը իմն է.

Ամենքը լուռ էին.

— Ես բերել եմ փողը, կրկնեց Հալդրօն. Աստուածածինը ինձ երեաց չքնաղ կոյսի պատկերով. առէք փողերս և ցոյց տուէք ինձ իմ շունը:

Բոնակալը, որին ու Mastino էին անուանում, առաջ եկաւ տիսուր և բարկացած, երեի ինքը իրանից ամաչում էր:

— Զեր շունը սատկել է, ասաց նա:

— Սատկել է. պատահմամբ խեղուել է:

Նա կարող էր ստել. ով կարող էր ապացուցել, թէ շունը թունաւորած, դեղած չէ:

Հալդրօնի աչքերը սկսեցին փայլել. մոայլ երեսից երեսում էր թէ ինչ է կամենում անել. սեղմեց ատամները և պատրաստուել էր ինչ պէս պատերազմում:

— Ցոյց տւէք ինձ իմ շունը. թող նա սատկած լինի, կամ առողջ, միայն ցոյց տուէք:

Ամենքը սաստիկ վախեցան:

կինը նորանից յետոյ շուտով վախճանուեց. աղքատ մարդիկ, որոնք իրանք էլ հաց անգամ չունէին ուտելու, սոված որբեկներին առան իրանց մօտ պահելու. ոչ ոք նոցա վերայ լաց չեղաւ, միայն այն սիրուն երեխան ամենայն օր հարցնում էր:

—Ի՞նչու Տօտօն չվերադարձաւ. ես մի սանտիմ տուեցի:

Քաջ հալդրոն ստացաւ իւր պարզել:



«Ազգային գրադարան»



NL0312094

6295

2-48

167 1

SM 2

ԳԻՒՆ Ե 20 ԿՈՊ.